

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յարտադրութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յարտադրութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կենդանացնել թէ մեզնեւ.— Ներքին Տե-
ստութիւն. Մամուլ. Նամակ Եւրոպ. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— Հեռագրութիւն-
ներ.— ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Գրական գէթեր:

ԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ ԹԷ ՄԵՆՏԵՆԸ

Անցեալ ձմեռ, երբ Պարսկաստանում սով
էր՝ մենք մի քանի անգամ առթիւ ունե-
ցանք համակրութեամբ խօսելու հայ կո-
նանց երկու բարեգործական ընկերութիւն-
ների մասին, որոնք գոյութիւն ունեն
Թաւրիզ քաղաքում: Մինչև այդ կանանց
ընկերութիւնները մեծ մասամբ կրթական
նպատակներով էին նուիրել իրանց ոյժերը:
բայց հասարակական աղէտը, որ երևան
եկաւ սովի կերպարանով մէջ, ցոյց տուեց,
թէ ինչ մեծ դեր են կարող կատարել
ինքնօգնութեան այդ երկու օրգանները
մի այնպիսի երկրում, ուր չը կայ հասա-
րակական կենսը, ուր հասկացողութիւն-
ները, հարողակցութեան ճանապարհնե-
րը նահապետական գրութեան մէջ են
գտնվում և ուր կառավարութիւնը թոյլ
է, չէ կարող հասարակական հիմնարկու-
թիւնների կատարած դերը իր վրա վեր-
ցնել: Խեղցի բարեգործութիւնը եթէ
այնքան անհրաժեշտ է քաղաքակրթու-
թեան բարձր աստիճանների վրա կանգնած
ազգերի մէջ, ապա ո՞րքան աւելի կարեւոր
դեր ունի նա Պարսկաստանի պէս մի եր-
կրում: Կողմնակի դիտողի համար վերին
աստիճանի միջոցառական երկրներ էր, որ
դարաւոր ստրկութեան այդ հայրենիքում
անհատները, մասնաւոր կին անհատները
կարողացել են այնքան հասկանալ հասա-
րակական գործունէութեան գաղափարը,
որ հիմնարկել են բարեգործական ընկե-
րութիւններ՝ քաղաքային հայ և կարտիսի
ուսում ու կրթութիւն տալու համար:
Մենք սակայն չենք կարող բաւական

նախալ այդքանով: Ամեն հասարակական
հիմնարկութեան մէջ մենք նախ և առաջ
կր կամենայինք տեսնել այնքան կենսու-
նակութիւն, այնքան բարոյական տոկու-
նութիւն, որ կարելի լինի նրա վերաբեր-
մամբ գործարարել անաշու, բարեացակամ
ընդհարողութեան խիստ պահանջները,
որովհետեւ չէ կարելի յարատեւութիւն և
անդադար գործացում սպասել այն տեղից,
ուր ամեն ինչ կատարեալ է համարվում,
իսկ իւրաքանչիւր նկատողութիւն, լինի
նա յոյն-իսկ շատ ճիշտ, շատ արդարացի-
ընդունվում է իբրեւ թշնամութիւն: Հե-
տեւելով այդ տարրական սկզբունքին՝ մենք
«Մշակի» էջերում տեղ տուինք այնպիսի
դիտողութիւնների, որոնք Պարսկաստանի
հայերի համար կարեւոր մի քանի հարցեր
էին շօշափում և որոնք ընդհարողութեան
բարեգործական ընկերութիւններից մէկի
բայցբայ Բայց ո՞րքան մեծ եղաւ մեր
զարմանքը, երբ տեսանք որ այդ նկատու-
թիւնները, փոխանակ իրանց բուն նը-
պատակին ծառայելու, փոխանակ հարցե-
րի թաղանթաւոր ընկերութեան գրիչ
դառնալու կրօնաբանութիւնների,
թշնամական զգացմունքների արժանացան
Դա նորից հաստատում է միշտ միևնոյն
ճշմարտութիւնը. հայը սիրում է որ իրան
միշտ գովեն. գովողը բարեկամ է, իսկ
ընդհարողութիւնը թշնամ: Հէնց այդ է պատ-
ճառը, որ հայերի մէջ ամենից շատ առ-
վածք ընդհարողութիւնն է:

Կրկնում ենք. մեզ համար շատ թան-
գազին էր Թաւրիզի հայուհիների գոր-
ծունէութիւնը, և մենք չենք դիտի մեր
բարեկամական վերաբերմունքը դէպի այդ
բարի գործը, ինչ տեսակ էլ նայեն մեզ
երկու ընկերութիւնները: Մեզ հասած լու-
րերին նայելով՝ տեսնում ենք, որ ինտրիգ-
ները, խռովութիւնները արդէն պատում
են հասարակական համակրելի գործի
շուրջը: Եւ թագցնել չենք կարող, որ դրա
պատճառն այն է, որ երկու ընկերու-

թիւնները նայում են միմեանց իբրեւ հա-
կաւորողներ, գործում են ինչպէս կօն-
կուրենտներ, ինչպէս մրցակիցներ, բայց
ոչ թէ այս բառի ազնիւ մտքով, ոչ թէ
բարի նախանձից և գործի համար այնքան
ցանկալի առաջադիմութիւն նախանձաւո-
րութիւնից դրդված, այլ ճիշտ այնպէս
ինչպէս մի վաճառական խանութ է բաց
անում հարեան խանութի մօտ՝ այս վեր-
ջինի առեւտուրը իր ձեռքը գցելու հա-
մար, և հետեւանք այն է լինում, որ եր-
կու խանութներն էլ անմիտ մրցակցու-
թեան պատճառով անանկանում են, փակ-
վում: Այս տեսակ մրցութիւնը անբաւա-
կանութիւնների, անձնական ընդհարում-
ների մշտական առթիւ է դառնում: Ու-
րեմի հասարակական օգտի տեսակէտից,
պէտք է ոչնչացնել վնասակար, մահացող
մրցակցութիւնը, ստեղծել արդիւնաւոր
գործ, լաւ համագործ լինելով, որ փառք
միակողմանի գովասանքների, շողորթութու-
թիւնների մէջ չէ, այլ գործի մէջ: Պէտք
է կենդանացնող գործի ծառայել, իսկ
բայցբայ գործը դէն գցել ընդմիջում:

Կենդանացնող գործը այն էր ինչի՝ երբ
ոյժերը կը միանան, ցրտացան չեն մնայ:
Միութիւնը մեծ ոյժ է— ահա ինչ կա-
սենք մենք Թաւրիզի հայուհիներին: Թող
յիշեն եօթանասնական թականների վեր-
ջերում Կ. Պոլսում կազմված կրթական-
բարեգործական ընկերութիւնները. նրանք
գործում էին առանձին-առանձին, ունէին
համակրելի նպատակներ, բայց աղողու-
թիւն չէին գտնում: Այն ժամանակ «Մշա-
կը» առաջարկեց, որ այդ ընկերութիւն-
ները միանան և միասին գործեն: Այդպէս
էլ եղաւ «Արարատեան», «Երզրացայից»
և այլ ընկերութիւններից կազմվեց մի
մարմին— «Միացեալ-ընկերութիւններ» ա-
նունով, որի արածները յայտնի են ամեն-
քին Նոյն օրինակին պիտի հետեւեն նաև
Թաւրիզի հայուհիները, եթէ իսկապէս
գաղափարական գործունէութեան նուիր-

վել են կամենում և ամենքի ցանկութիւնն
է, որ հասարակութիւնը աւելի լայն չա-
փերով, աւելի հաստատ և արդիւնաւոր
կերպով վայելէ ինքնօգնութեան օրգանի
բարեբեկութեան: Բաւական է մի կողմ
անձնական նկատումները— իսկ սա ճշմա-
րիտ և անհասանք գործիչների առաջին
պարտականութիւնն է. բաւական է հա-
մակվել ընդհանուր գաղափարով, զնեւ
գործը լայն սկզբունքների վրա, ձեռք
ձեռքի տալ— և հասարակական հիմնար-
կութիւնը այլ ևս մանր-մունք զգացմունք-
ների, փոքրիկ շահերի, ընդհարումների
ցաւալի տեսարան չի ներկայացնի, ինչպէս
այժմ: Միայն օգուտ, այն էլ խոշոր օգուտ
կարելի է ստանալ այն հանգամանքից, որ
գործը տանվում է միացած ոյժերով, լի-
վին հասարակական է, այսինքն հա-
սարակական ընկերութեան ենթարկված,
հասարակութեան վստահութեան և հա-
մակարենների վրա հիմնված: Մի այս-
պիսի բուն ժողովրդական գործառնու-
թիւն կը ցանկալինք մենք Թաւրիզի
հայ կանանց և շատ ու շատ կը ցանկը-
նելէ ներկայ հանգամանքները զնալով ա-
ւելի ևս զարգանան ու այն աստիճանին
հասնեն, որ միանգամայն քայքայվի կա-
նանց այնքան գնահատելի եռանդն ու
բարի կամքը...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Հասարակական բարեգործութիւնը, անշուշտ,
մի ժողովրդի ինքնաճանաչութեան և կուլտու-
րական առաջադիմութեան նշաններից մէկը պի-
տի համարել: Հայերը այդ կողմից պարծենալու
շատ հիմքեր ունեն. եթէ մենք հետեւեք ազգայ-
ին կտակների և այլ ձեռնարկութիւնների պատ-
մութեան՝ մեր օրերից շատ կը հեռանանք և կը
հասնենք այնպիսի ժամանակների, երբ հասա-
րակական բարեգործութիւնը համարեա բոլորու-

նել է դիմենք փաստերին՝ կը տեսնենք, որ
Նաղարեանց, իրաւ, թոյն ու խարազան չէր
խնայում: Իր մի նամակի մէջ նա հայերին ուղ-
ակել անուանում է «անբարոյական և տաւաղի
ժողովուրդ»։ իսկ «փոստ», տղէտ, շահամուլ, ֆա-
նատիկոս, բարոյապէս մեռած» անունները սո-
վորական են նրա յօդուածների մէջ: Նա ա-
սում էր, թէ գերեզմանի մէջ է այդ ազգը, թէ
նրան յաւիտեան կորսում է սպառնում. չէր
հաւատում, թէ նա կրթվում է, ունի արժանա-
ւոր առաջնորդներ. չէր հաւատում նոյն-իսկ,
թէ նա ճշմարիտ ըրիտոնեայ է:

Էլ ինչ ապացոյցներ են հարկաւոր, որպէսզի
Նաղարեանց ուխտաւ, անհաշտ թշնամու բոլոր
յատկութիւններն ունենար: Հակառակորդներին
միայն այդ խիստ, թունալից խօսքերն էին հա-
մնում. նրանց ականջներում միայն այդ հար-
ուածներն էին շառաչում: Նաղարեանց թշնամի
է. բայց ինչո՞ւ նա այնքան պինդ կապված է իր
ազգին: Նաղարեանցը ըստիւմ, կործանում է.
բայց ինչո՞ւ նա օր ու գիշեր բարոյներ է գրում,
ծրագրեր է ցոյց տալիս, թէ ինչպէս պիտի
ազգը բարձրանայ իր անկումից, ինչի վրա պի-
տի հիմնել իր բարոյական ոյժը և դիմացկանու-
թիւնը, ինչի մէջ պիտի որոնէ իր փրկութիւնը:
Ձեն հասկանում այդ զարմանալի հակասութիւն-
ները. չը գիտեն, որ այդ սարսափելի մարդը մի
յարձակվող է. բոլորովին մոռանում են, որ ճշ-
մարտութեան հոգով լցված մարգարէն կայծակ
և երկաթ է մաղում իր ընտ և անզգա ժողո-
ւրդի վրա:

Մենք, որ հեռուից ենք նայում այդ տեսա-
րանին՝ գիտենք, որ ամեն տեղ են եղել մորա-
կող խօսքով, ոչնչացնող ծաղրով, անողորմ
խտուրթեամբ զինված մարդիկ, որոնք նոր օր
էին քարոզում, որոնք կանչում էին, թէ եկե՛ք
հնձուրը, որ պիտի ցորենը բաժանէ որոմներից
և որոմներից պիտի այրէ: Վաղուց, շատ վաղուց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Ա.

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Այս մարդու հոգու մէջ թրթռում
էր մի արեւնաշուր մի արտառու-
սէր դէպի հայրենիքը. մի սէր, որ
ամօթխած լինելով ինչպէս ամեն
մի սէր՝ յօժարութեամբ թագըն-
վում էր անբաւականութեան և
յանդիմանութեան խօսքերի տակ:
Հէյնէ— ՀԵՂԵՂԵՂ ԲԵՐԵՆԷՅ:

Ի.

Շատ գործիչներ իրանց հետ անմեռ են պա-
հում իրանց թշնամիներին: Ինչից է, օրինակ,
որ երբ վերցնում էք Վիկտոր Հիւգօն՝ իսկոյն
սիւնում էք Նապօլէօն III-ին, կամ Բեօքսին՝ կող-
բին միշտ նստած է լինում Մէնցելը, այն էլ
անպատճառ ֆրանսիացիներ ուտող Մէնցելը:

Մի օրէնք է գործում այդտեղ, և նոյն այդ
օրէնքի գործութեամբ է անշուշտ, որ երբ տա-
լին էք Ստեփանոս Նաղարեանցի *) անունը՝
իսկոյն մոռացութեան գերեզմանից դուրս են
սողում Մեղու Հայաստանին, ՎՊանահայ Ա-
ղանին, ձեռնաքաղը «Փորձը», կիսով չափ
Վեռնիկը և Կ. Պօլսի լեռնակը:

Նաղարեանցը ոչ Վիկտոր Հիւգօ է, ոչ Լիւդ-
վիգ Բեքսնէ, և դա վերաւորական չէ, որովհե-
տա նա իր ազգին էլ ֆրանսիական ազգ չէ, ոչ
էլ, ի հարկէ, գերմանական: Արծիւը իր թռիչքն
ունի, ծիւղը իր թռիչքը: Բայց այդ չէ նշանա-

*) Ներկայ 1899 թ. ականի ապրիլի 26-ին լրացաւ
Նաղարեանցի մահվան քսանամակը, սակայն ոչ որ չը
լինէր այդ օրը: Նաղարեանցը մեր նոր գրականու-
նեան հայրն է: Եւ ահա մենք նուիրում ենք նրան
մի շաք յօդուածներ մեր նոր գրականութեան մա-
մին, որոնք կը կրեն «Գրական Դէմքեր» վերնագրերը:

կում, թէ երկուսն էլ թաւուներ չեն: Մարդ-
կային ընդհանուր յատկանիշներ եղբայրացնում
են ազգերը, չը նայած դրանց քաղաքական և
քաղաքակրթական տարբեր գիւղերին. եղբայ-
րացնում են այդ ազգերի գործիչներին, չը նա-
յած որ ընկերները հաւասար չափով չէ դրանց
մէջ ճերմկային հուր թափել: Հաւաքեցեք ընդ-
հանուր պատմութեան այն բոլոր էջերը, որոնք
պատմում են, թէ մարդը ինչպէս էր ծնւածաբու-
թիւն որոնում, և դուք կը տեսնեք, որ այդ
մարդը միևնոյն է ամենայն տեղ— Հրէաստանի
խորքերում, թէ Գերմանիայում, եանկիների աչ-
խարում, թէ Սկանդինավիայում: Ցեղերի, դա-
րերի, դիրքերի, անդամաւորների մի անհուն
տարբերութիւն, ճիշտ է, բաժանում են այդ
մարդկանց, բայց էութիւնը, հոգին միևնոյն է
ամեն տեղ: Պատմութիւնը ձեր ականջին այդ է
ասում: Պատմութիւնը բաց է անում ազատա-
բար հոսանքներ մի մեծ շրջանառութիւն եր-
կրագնդի զանազան կողմերում և տալիս է ընդ-
հարկողների անունները, նոր գաղափարը Նի-
դէմ, ազատութիւնը՝ բռնութեան դէմ, լոյսը՝
խաւարի դէմ: Հաւաքեցեք այդ բոլոր անուն-
ները, դուք կը տեսնաք մի ընդհանուր տեսա-
րան— կուր մարդկային հասկացողութիւնների
համար, մարդկութեան զաւակների մէջ: Դա
հասկանալի է ամեն տեղ, դա ինչ, բայց և միշտ
նոր հերոս է, որ եղբայրացնում է ցեղերը, ա-
մեն տեղին և լեզուին տալիս է միևնոյն մարդ-
կայնութեան գոյնը:

Նաղարեանցին վիճակված էր մի այդպիսի
կուր մտցնել հայերի մէջ. այդ կուրը տուեց
նրան առաջնորդ հրամանատարի դեր, բայց եր-
բէք չը խաղցրեք նրա մէջ նաև հասարակ զին-
ուորի պարտաւորութիւնը: Նա հասկանում էր,
որ այդպէս է ինքը, ուստի և կատարեալ գի-
տակցութեամբ կրկնում էր Գրիստոսի խօսքը.
«Եւ եկե՛ք խաղաղութիւն արկանել, այլ հուր»:
Թօսքը ուրեմն նախ Նաղարեանցի թշնամի-
ներին տանք: Ահա:

Նաղարեանց ազգի թշնամին է: Նաղարեանց
բանգում, ոչնչացնում է հայութիւնը՝ դաւաճա-
նին, օտարամուլ մարդուն վայել միջոցներով:
Միայն ոխերիմ, արիւնարբու թշնամին կարող
է այնքան անարգել իր ազգը, այնքան ցեխո-
տել նրան, հայտնել:

II.

Թօսքը ուրեմն նախ Նաղարեանցի թշնամի-
ներին տանք: Ահա:

մինիստրութեան մի շրջաբերականով Շուշու թաղաքային վարչութիւնը շուտով պիտի դադարեցնէ վերոյիշեալ տուրքի ստացումը:

ՆԱՄԱԿ ԽՊԱՐԳՈՒԹԵԱՆ

Քիֆլիս, սեպտեմբերի 1-ին

«Մակի» 146 համարում Ալեքսանդրօպօլից Զիթովցեաններ ընտանիքի հետ պատահած դէպքի մասին հաղորդած իբրեւ փաստ բոլորովին ճիշտ էր. սակայն նկատողութեան արժանի է լրատուն, որ լուրջ չէր վերաբերվել խնդրին, այնպէս ինչպէս պէտք էր, և չէր պարզել իրողութիւնը՝ որպէս հարկն էր:

Մենք ներդրութիւն խնդրելով պ. լրատունից՝ աւելացնում ենք մի երկու խօսք նրա լրին, և ցանկանում ենք մի քիչ պարզել այդ եղբորութեան աստուած, արձագանգ լինելով հասարակութեան զայրոյթին և ընդդէմը Զիթովցեանների այդ ընտանիքը Ալեքսանդրօպօլում յայտնի ընտանիքներից է: Այդ ընտանիքի մի քանի անդամները ստացած են բարձր կրթութիւն և բարձր դաստիարակ. ահա այսպիսի շնորհի մէջ ապրում էր նրանց միակ մատաղանս դուստրը:

Օրիորդը լինելով աշխոյժ, կայտառ և բռնակողի անցնելու արար, դեռ հազիւ 15 տարեկան հասակում տեսնում է դերասան Յ. Ստեփանեանին բեմի վրա «Ալյան-Բալասու» էֆֆէկտաւոր դերում և սիրահարուում է. այնուհետև դերասանի Բազում եղած միջոցին օրիորդը գերում է մի-երկու նամակ նրան և պատասխան ստանում. Գերասանը, ինչպէս ինքը այս դէպքից առաջ ամեն տեղ անել էր՝ երբեք ճանաչելիս չէ եղել օր. Զիթովցեանին և այդպէս անանց ճանաչութեան շարունակել է իր նամակադրութիւնը, մինչև այս տարի ամառը Ալեքսանդրօպօլ գալով:

Յետոյ այդտեղ օրիորդը թեթև կերպով ծանօթանում է դերասանի հետ. և յափշտակված լինելով դերասանի պողպատով ու խաղերով՝ այդ միամտ, հետազոտող օրիորդը համաձայնում է փախչել իր իղձալի հետ, որը դժբախտաբար պլանտանական սիրով սիրող, մաքուր և մատաղ օրիորդի սրտում և լինում է փայլուն:

Գերասանը, օգտվելով օրիորդի էքսպրես-ցիայից, փախչում է նրան. բայց չանցած 7—8 ժամ՝ Զիթովցեանները գտնում են նրանց հետ-բերել և յետ երբևէ:

Այժմ դարձնում է մի հարց. ինչպէս վարվել:

Արդեօք իրաւունք ունին Զիթովցեանները, որ ճշնուն են իրանց գտնող կամ քրոջ սէրը, և եթէ ճշնուն են—ինչ պատճառներով: Պատճառները շատ պարզ են.—մի շարք փաստերի, դերասանի ընկերները ու ծանօթները ասածների հիման վրա, դերասանի զանազան տեղ արած խոստովանքները, ցինկի խօսքերի և պարծեն-կոտութեան հիման վրա երևաց, իբրև ճշմարտութիւն, որ դերասանը երբեք չէ սիրել օրիորդին, այլ միշտ աշխատել է զարգացնել օրիորդի մէջ հրապուրանք իր կեղծ, ձեռնով ու խոստովանքով, շահագործելով օրիորդի սիրոյ էքսպրեսը՝ վճել է մի շատ ստոր, հաշուել քայլ—փախչելով օրիորդին, անպատուել, յետոյ պահանջել ծնողներից խոշոր գումար՝ ամուսնանալու համար:

Գերասանի այս ստոր, խաբէական քայլը միանգամայն դատապարտելի է և շատ զգուշելի: Ալեքսանդրօպօլի ամբողջ ինտելիգենցիան զուտանքով է խօսում դերասան—շահաւորի մասին. խորին ոգազմունքով ցականցում է օրիորդին, որ զո՛հ եղաւ դեռ մաքուր հասակում իր հաւատի մէջ դէպի աշխարհ, իր մաքուր գգազմունքները ու երանքները մէջ դէպի կեանքն ու մարդիկ...

Ահա իսկական փաստը, փաստի դառն էությունը:

Ա. Իսահակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներկայումս Ֆինանսների մինիստրութեան մէջ հարց է յարուցված՝ մեծ նաւահանգիստ ունեցող քաղաքներում հիմնել առանձին ծովային հաշտարար դատարաններ, որոնք պէտք է բացառապէս զբաղվեն այնպիսի դործերով, որոնք վերաբերում են ծովային աւետարին, և պիտի ընդնեն այնպիսի վէճեր, որոնք տեղի կունենան չղեկնաւաւերների և նրանց ծառայողների, ապրանք ուղարկողների և ապրանք ստացողների մէջ:

Բորժով կալուածքի կառավարիչ Արդասէնով հեռագրում է «Պատկ» լրագրին, որ երկու շաբաթ է, ինչ պարփում են Եօրպանի գաւառի անտառները: Կրակը սաստկանում է, և մինչև այժմ ոչ մի միջոց չէ ձեռք առնված՝ կրակը հանգցնելու համար:

«Новости дня» լրագիրը հաղորդում է, որ Մոսկովի ինքնաշարանի պրոֆեսոր Ի. Ս. Գալ-բարով, որ համալսարանական ֆակուլտետում դասախոսում էր քաղաքացիական իրաւունքը՝ ստա-ղիր է թողնել իր պաշտօնը:

Մայրաքաղաքի լրագիրները ասելով՝ վերջին ժամանակներս կառավարիչ սենատը վճել է այն շատ հետաքրքրական հարցը, թէ արդեօք նոր կառուցանվող շինութեան տեղը պարտաւոր է հարևան շինութեան պատճառած վնաս-ները տալ: Սենատը եկել է այն եզրակացու-թեան, որ նոր շինութեան տեղը պարտաւոր չէ իր հարևանների վնասները վճարել՝ եթէ միայն այդ նոր տունը կառուցվել է գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն:

«Трудовой листок» լրագրին հեռագրում են ԳԱՆՁԱԿԻՑ օգոստոսի 30-ից. «Այսօր, ներկայ-ութեամբ նախագահների, քաղաքացիների, ձայ-նաւորների, պատուաւոր քաղաքացիների և ա-շակերտութիւնների ծնողների՝ մաղթանքից յետոյ բացվեց իրական պրոգնիստիկա»:

ՀԱՂՐՈՏ գիւղից մեզ գրում են. «Օգոստոսի 12-ին մեր գիւղի ամառանոցում տեղի ունեցաւ հետեւեալ դէպքը: Օրը ցերեկով մի երիտասարդ, Մեխակ Իծարածեանց ազգանունով, մտնում է իր բանից հարևան Փերոյանների դպէն (վրանը), որ-տեղ լինում է հարևանի 15 տարեկան աղջիկը, վերջնում է աղջկան և երկուսով անյայտանում են: Նրա աղջկա եղբայրները իմանում են եղե-րութիւնը՝ սկսում են անտառների մէջ որոնել. և 3 օրից յետոյ աղջկա եղբայրը, Եսմօն, զը-տնում է գիւղից ներքև մեծ գետի ափին ու աղան և աղջիկը քնած են: Եսմօն զոռչուլութեամբ մօ-տենում է և ձեռքի անաղին չոքախլով խփում է քնած աղալի գլխին: Ահաղին հարուածից շրշ-կված Մեխակը չէ կարողանում զուտը բար-ձրացնել. Եսմօն էլնց այդտեղ ձեռքերը և ոտ-ները կապում է և սկսում իր քրոջը ծեծել. յետոյ առաջ է անում երկուսին դէպի գիւղը: Ճանա-պարհին հանում է դաշտը և սկսում է ծածկը-կել տղայի մէջքը և անաղին վերքեր է տալիս մինչև 12 տեղ: Դրանով չէ բաւականանում. ձեռքը անաղին փայտով խփում է նրա ոտի չոր տեղը և ոտիկը կոտրում է. տղային այդտեղ թողնում է վայր ընկած և ինքը քրոջը վեր-ցնում է, գնում գիւղը ու այնտեղ յայտնում, թէ աղան փախել է և ինքը չէ կարողացել բռն-նել նրան: Գիւղի տանուտէրը հրաժարում է գիւ-ղացիներին՝ կրկին որոնել փախած երիտասար-դին, իսկ Եսմօն ուղարկում է Զալալ-Օղլի, որ պրիստաւին բերէ: Եսմօն գնում է ուղիղ այն ճանապարհով, որտեղ թողել էր իր կիսակենդան գոհին. դեռ նրան չէ հասած՝ պատահում է նրա եղբորը, որ իր եղբորը որոնելիս է լինում, որ-պէսզի չը սպանեն, և յանկարծ տեսնում է իր եղբորը մի տեղ արիւնի մէջ չաղախված՝ վայր ընկած. խեղճ տղան գլուխը ծեծելով վազում է դէպի գիւղը իմաց տալու և պատահում է Ես-մօնին: Տեսնելուն պէս յարձակվում է Եսմօն վրա, նա էլ սրա վրա. միմեանց շատ ծեծելուց յետոյ՝ Եսմօն կարողանում է մի կերպ հակա-ռակորդի ձեռքը առնել իր բերանը և այնպէս ամուր կծել, որ խեղճի սիրտը գնում է, և նա զորովում է գետին, իսկ ինքը սկսում է փախչել և գնում է պրիստաւին բերելու: Մեխակի եղ-բայրը վեր է կենում ու գնում գիւղը իմաց է տալիս, գնում են, կիսակենդան տղային վեր-ցնում են, փայտերի վրա դնելով տանում են գիւղը: Ասում են որ կը մեռնէ: Միւս օրը գալիս է պրիստաւը, բռնում է Եսմօնի և կա-պած ուղարկում է Զալալ-Օղլի: Երկու օրից յե-տոյ արձակում են. այժմ ազատ ման է դալիս Եսմօն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Պարիզի մի քանի լրագիրներ հաղորդում են, թէ շուտով տեղի կունենայ մենամարտութիւն աւստրիական դեսպանատան զինուորական կը-ցորդ գնդապետ Շնէյդերի և գնեղաբալ Բոժի մէջ: Գնդապետ Շնէյդեր, իմանալով գնեղաբալ Բոժի ցուցմունքի այն մասը, որտեղ նա կա-կած է յայտնում Շնէյդերի հերքումի առիթով (քանի վերաբերվում է Շնէյդերի նամակին, որի մէջ Իրէֆուսին նա յանցաւոր է ճանաչում), յանձնել է աւստրիական դեսպանատան կառա-վարչին պահանջել Բոժից՝ կնի հրաժարվել իր արտասանած խօսքերից, կամ թէ բաւարարու-թիւն տալ:

«Temps» լրագրի Բելգրադի թղթակիցը, որ տեսակցութիւն է ունեցել Նիշում երկու թա-գաւորների հետ և որը շրջել է միջին և արեւ-մտեան Սերբիան՝ ասում է, որ երկիրը գտնու-վում է ջղային դրութեան մէջ: Կենսովիչի գոր-ծին, ասում է թղթակիցը, ազգաբնակչութիւնը վերաբերվում է սառնասրտութեամբ, բայց չէ կարելի նոյնը ասել կարծեցեալ դատակցիների վերաբերմամբ: Յետագայ գործի ընտելութիւնը անմտութիւն կը լինէր: Թղթակից կարծիքով Միլանի ներկայութիւնը Սերբիայում, այժմեան դրութեան պատճառով, անհրաժեշտ է:

«Ամերիկական Journal» լրագիրը, որ լոյս է տեսնում Ատլանտ քաղաքում, հրատարակել է մի գերմանացու նամակ, որ իբր թէ գերմա-նական զինուոր շտաբում թարգմանի պաշտօն է վարել: Նա, իբր թէ, թարգմանել է № 120 թղթանոթին վերաբերեալ զօկուսներու: Դրէյ-ֆուս, ասում է նա, գերմանական զաւորներ բիւ-րօյին բոլորովին անյայտ էր: Դաւաճանք եղել է Էստէրհազի, որը գերմանացի ներկայացուցչին միշտ գաղտնի զօկուսներն էր հաղորդում քաղաքամարդ տեղերում, կամ մի օրէն ճաշկե-րայի միջոցին: Պարիզում միջնորդի դերը կա-տարում էր մի ինչ-որ դրուսի, որը ամեն ա-միս ուժեղ էր ստանում Լիւնի քանի միջոցով: Այդ զօկուսներն էր մի քանիսը կարվում էին խաղատիկներով մէջ, որոնց պատրաստում էր մի ինչ-որ քրտնից, և այդ եղանակով ուղարկ-վում էին Գերմանիա, բայց ասելի զոռչուլութեան համար ոչ ուղղակի այնտեղ, այլ Անգլիայի վրայով:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

31 օգոստոսի

ԲԵՐԼԻՆ: Լուրեր են պտտում, թէ մասնա-ժողով է կազմվում Պարիզի ցուցահանդիսին մասնակցելու դէմ: Մասնաժողովի գլուխ են կանգնած խոշոր գործարարները:

ԲԵՐԼԻՆ: Կենսովիչի դատը Աւագ քահանայ Դիւրի խոստովանում է, որ Միլանի և կառու-վարութեան դէմ վրաւորական նամակներ է գրել, բայց թագաւորող տոմը զահնկէց անե-լու չէ ձգտել: Վկայ Բաղդօլիլ ցոյց է տալիս, որ Դիւրի 1890 թ-ին ասել է իրան, թէ պէտք է յետ կանչել Պետր Կարագէօրգիւլին: Դիւ-րիչ հերքում է այդ: Բաղդօլիլ պնդում է իր ասածի վրա:

ՊԱՐԻՉ: Զօլա սաստիկ բողոքում է «Aurore» լրագրի մէջ Բէնի դատավճռի դէմ և պնդում է, որ 1898 թ-ի յուլիսը ամիսն իմացել է ա-մենաճիշտ կերպով, որ Էստէրհազի դաւաճան է, որովհետեւ նա Եվաթիօպիան հաղորդել է մեծ քանակութեան զօկուսներն, որոնց մեծ մա-սը գրված է նրա ձեռքով: Բերլինում կազմված է նրանցից մեծ ժողովածու: «Նա այն ժամա-նակաւորներից, ասում է Զօլա, երկուսը մէջ էի գտնվում, չը լինի թէ Գերմանիան մեզ մտրակէ իր ժող զանվող ապացոյցներով, անպատեւելով այդպիսով մեր զօրքը: Զօլա ցաւ է յայ-տնում, որ զինուորական կցորդներն չը լսեցին. կառավարութիւնը այն ժամանակ ապացոյցներ կունենար, թէ դիւտ ճշմարտութիւնը: Զօլա պնդում է այն բանի վրա, որ կառավարութիւ-նը պէտք է աշխատէ ձեռք բերել հաղորդված զօկուսներն: Նա կարծում է, որ եթէ կա-ռավարութիւնը պահանջէ նրանց՝ կը ստանայ: Այդ կը լինի մի նոր փաստ, որ և կը պահանջէ երկրորդ վերաքննութիւն: «Եթէ կառավարու-թիւնը, ասում է Զօլա, կը հրաժարվի՝ մենք կը շարունակենք կռիւը: Իմ գործին ընտելութիւնը կը վերսկսվի վերապրում սեպտեմբերի 23-ին, եթէ յաջողի՝ Լաբորի այնտեղ պաշտպանողա-կան ճառ կարտասանէ, որը շարտասանեց Բէն-նում, և կասէ բոլոր ճշմարտութիւնը, առանց երկիւղ կրելու ինձ ոչնչացնել, որովհետեւ ես պատրաստ եմ այդ ճշմարտութեան համար զո-հել իմ աշատութիւնս, իմ արեւնս»:

ՊԱՐԻՉ: Միլանցիները խորհուրդ ելինեան պալատում: Վալդէ-Բուսսօ հաշիւ ներկայացրեց պրէֆէկտների հեռագրերի և զեկուցումների մասին և Բէնի դատավճռի հետևանքները մա-սին: Ամբողջ գաւառը, ինչպէս և Պարիզ, կա-տարեալ խաղաղութեան մէջ են գտնվում:

ՎԻԵՆՆԱ: Քննելով Բելգրադի գործի ընտու-թիւնը՝ «Neue Freie Presse» լրագիրը հաստա-տում է, որ արմատականները կուսակցութեան յանցանքներով չեն կարող արդարաւալ կառա-վարութեան մեղքերը, առաւել ևս ի չարի գործ ընելով արդարադատութիւնը: «Բելգրադի դէպ-քերը, ասում է լրագիրը, ասելի չուտ քաղաքա-կան հալածանքի կերպարան են կրում քան կանոնաւոր դատավարութեան: Գնդգիւլիչի կարեւոր Սերբիային ծառայութիւն չի մա-տուցանի՝ եթէ կուսակցական իրաւաբանութիւ-նը կը գերադասէ օրինաւոր դատաստանից, որպէսզի միայն պատժէ արմատական կուսակ-ցութիւնը: Ի հարկէ, օրինաւոր և գովելի է Ա-լեքսանդր թագաւորի ջանքը՝ ապաւել երկրիւր կուսակցական կրուր անտանձ ագիտացիայից և օժանդակել նրա տնտեսական զարգացման, բայց այդ նպատակին հասնելու ամենաարագը միջոցն է՝ դատարանի անկողնիալարութիւնը: Մարդկայնութեան պարտքը պահանջում է, որ Սերբիայում իշխանութիւն ունեցողներին ներշն-չուէր, թէ քաղաքական տենդենցիօզ դա-

տաստանի հետևանքներից ոչինչ չեն վատակի, այլ շատ բան կը կորցնեն:

1 սեպտեմբերի

ԼՕԴՁ: Այսօր Երեկոյան հրդեհ ծագեց Զակ-սի գործարանի շինութեան մէջ, ուր տեղաւոր-ված էր թելի մանաւանդ: Վնասը 100 հազար րուբլուց անել է:

ԲԵՐԼԻՆ: Կենսովիչի դատը: Այսօր հարցու-փորձի ենթարկվեց մեղադրվող մաքսային պաշ-տօնեայ Ալալանչիլ: Կարդացվեց Կարագէօրգու-վիչի նամակը Ալալանչիլին, որի մէջ արտա-յայտված է նամակի հեղինակի ցաւակցութիւնը սերբիական ժողովրդի տանջանքների վերաբեր-մամբ: Ալալանչիլ յայտարարեց, թէ ինքը Ան-չէլիչի հաւատարմատարն է: Ալալանչիլ ժել-տում է, որ Կարագէօրգուլիչի հետ օրէն յարա-բերութիւն ունեցած լինի, կամ օրէն մասնակ-ցութիւն նրա օգոտին կազմակերպված դաւա-ցութեան մէջ:

ԿՕՊԵՆՀԱՊԷՆ: Ամբողջ արշաւախումբը հեռագրում է, թէ հասաւ հիւսիսային լայնու-թեան 67 աստիճանի 23 րոպէս և հանդիպեց այնտեղ միապաղաղ ձկնաւային սաւոյց: Ամեն-քը առողջ են: Հեռագրում տեղեկութիւններ չը կան Անգլիի մասին:

ՊԱՐԻՉ: Ոստիկանութիւնը գտաւ այն եղանա-կը, որով Շաբրօլի փողոցի տունը կերակուր էր ստանում: Այս բանը կատարվում էր թոկի մի-ջոցով, որ ձգված էր «Grand Occident»-ից դէ-պի նրա հանդէպ գտնվող տունը, որի միջոցով կարելի էր կերակուրներ ցած լինեցնել: Ոստի-կանները մտան այն դրասենեակը, ուր գտնվում էր թոկի ծայրը, և այնտեղ գտան Գերէրի չորս բարեկամներին, որոնք կալանաւորվեցին: Դա-տաստանական ըննիչը հրամայեց նրանց բան-տարել:

Պրօկուրօրը կազմեց լրացուցիչ զեկուցագիր դաւադրութեան մասին, այն փաստերի վերաբե-րութեամբ, որոնք բացվեցին՝ բարձրագոյն դա-տարան հրաւիրելուց յետոյ:

Լուրերին նայելով՝ Իրէյֆուսին շուտով նե-րումն կը շնորհի:

Ս. ՊԵՏԵՐԲՐՈՒՐԻ ԲՈՐՈՍԱ

1 սեպտեմբերի

Մուհանթիսի ընթացքը		
Երեք ամսով Լոնդոնի վրա 10 ֆունտ	93.80	
" " Բերլինի վրա 100 մարկ	45.72 1/2	
" " Պարիզի վրա 100 ֆրանկ	37.17 1/2	
25 4րդ Լոնդոնի վրա 10 ֆունտ	94.75	
" Բերլինի վրա 100 մարկ	46.30	
" Պարիզի վրա 100 ֆրանկ	37.42 1/2	
Բորսային դիվիդենտ		
4 1/2% պետական բենտ	6—7 1/2	
4 1/2% ազն. կալ. բանկի բաւ. թղթ.	100 1/2	
4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի	98 1/2	
5 1/2% վեճակ. տոմ. առաջին ներքին փոխ.	297 1/2	
5 1/2% " " երկրորդ " " "	256	
5 1/2% " " բաւ. թղթ. ազն. կալ. բանկի	208 1/2	
5 1/2% ոսկու բենտ	155	
5 1/2% գաւա. թղթ. փոխ. հող. վարէլի ընկ.	100 1/2	
1 1/2% ներքին երկաթուղ. փոխ. 1890	100 1/2	
1 1/2% " " " " " " " " " " " "	1892	
5 1/2% Թիֆլիսի վարէլի ընկ.	99	
4 1/2% Թիֆլիսի կալուած. բանկի	99	
6 1/2% Գաւ. վկայակ. կալուած. բանկի	100	
5 1/2% " " " " " " " " " " " "	100	
Ազգային Բուս. առեւտր.-աղբիւն ընկ.	276	
" " " " " " " " " " " "	658	
" " " " " " " " " " " "	640	
" " " " " " " " " " " "	820	

Ժամանակաւոր խմբագիր՝ ԱՌԱՔԵԼ ԲԱՐԱՍԱՆԵԱՆ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՍԼԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՐԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

№ 1 գնացքը		№ 3 գնացքը	
Բաղուրից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 15 ր.	գեր. 12 ժ. 20 ր.	Գերբուրմ է	Միտում
Թիֆլիսի է հասնում	առ. 8 ժ. 40 "	Եր. 6 " 38 "	Վարչական կազմում է 7 ժ. 20 ր.
Թիֆլիսի դուրս է գալիս	" 9 " 10 "	Եր. 7 " 37 "	Պատասխան
Բաժնետոմ է հանունում	եր. 8 " 32 "	սառ. 8 " 1 "	
№ 2 գնացքը		№ 4 գնացքը	
Բաժնետոմից դուրս է գալիս առ. 9 ժ. 15 ր.	գեր. 9 ժ. 0 "	Եր. 9 ժ. 0 "	Եր. 9 ժ. 0 "
Թիֆլիսի է հասնում	եր. 8 ժ. 53 "	սառ. 9 " 4 "	Եր. 9 ժ. 0 "
Թիֆլիսից դուրս է գալիս	" 9 " 23 "	" 11 " 8 "	Եր. 9 ժ. 0 "
Բազուր է հանունում	ցեր. 1 " 04 "	" 6 " 1 "	Եր. 9 ժ. 0 "

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.